


14356

Արարչական



ԱՆԻՔ-ԿՈՂ
1908

212

ԳՎ.
Ու. Ա. Մ. Տ. 13

Am-1736



ՄՈՒՐԱՑԿԱՆԸ

Պատկեր

Իրական կեանքից

Կազմեցին

Կ. Բ. և Խ. Մ.

891.99
Մ-99

Յարան „ՇԻՐԱԿ“ Արժույտնորոգիչ

1908

Արմ.
2-3993a

291.99
15-99

ՄՈՒՐԱՅԿԱՆԸ

Պատկեր

Իրական կեսնբից

2003

Կազմեցին

Կ. Բ. և Խ. Մ.

ԱՈՅ. № 20791

Handwritten signature

Յպարան „ՇԻՐԱԿ“ Ալեքսանդրապոլ

1908

ՄԳԱ

ՎՊԵ-Տ

29618-67

49612. ւեհ.



29618-67

Մ Ո Ւ Ր Ա Ց Կ Ա Ն Ը

Հարուստ մարդիկ կուտան կիսմեծ,
Աշխարհի ճոխ սեղանից.
Մենք աշխարհի խորթ զաւակն ենք,
Մեզ փայ չկայ աշխարհից:
Աւ. Իսահակեան



ուրաւ էր...

Ամբողջ քաղաքը մեծաւային
գրուածքին մէջ էր ընկզմած:

Գետինը ձիւնով պատած էր, բնութիւնը
ամեն ինչ սառեցրել էր: Չիւնը մպիտակեցրել էր
ամբողջ քաղաքը: Ամեն մարդ մտել էր իր բը-
նակարանը: Քաղաքը ներկայացնում էր մի կա-
տարեալ անապատ: Լուռ էր ամեն ինչ: Քա-
ղաքի խուլ անկիւններից մէկում, ձան տակ
ծածկւած էր մի խուլ խորճիթ, որի մէջ ապ-

րում էր մի վերին աստիճանի ազքատ ընտանիք:

Պիտաշէն խրճիթի անկիւնում պառկած էր Տիւանդ, ընտանիքի աշխատող ձեռքը՝ անբախտ Յովնանը: Իւր երեք երեխաները մերկ ու բազմապառկած պառկած էին գետնի վերայ, իսկ նրանց մայրը հոգսերի ու ամառանքների մէջ տառապում էր, սղբալով իր դառն վիճակը: Անկողնու մէջ խտանջւում էր եղճ հայրը, Տիւանդութիւնն արդէն մաշել էր նրան: Երեխաները քաղցած էին, դրա համար էլ նրանց մայրը ազիզորում լալիս էր ու անիծում էր իրենց բազմապարտ: Քաղցածութիւնն ու ցուրտը արդէն նրանց ճնշել էր: Նրանք լցւած էին դառն հոգսերով և մի կերպ քարշ էին տալիս իրենց թշուառ գոյութիւնը: Խեղճ Յովնանը որ երկար ժամանակ չէր լսօսում լուռ պառկած էր, հազիւ հազ շունչ քաշեց ու սկսեց իւր կնոջ հետ խօսել:

—Մյ կին, ասոց ծերունին, այսօր երեխաները ոչինչ չեն կերել, Աստուած իմ, նրանք մեզ չեն արգեօք, երեք օր է ոչինչ չեն կե-

րել, չէ որ նրանք չեն հասկանում, թէ ինչ է չրաւորութիւնը, և միմիայն լալիս ու հաց են պահանջում, բայց դժբախտաբար մենք ոչինչ չունենք ուտելու:

Գինը ձայն չէր հանում. միայն նկատելի եղաւ նրա աչքերից թափուող արտասուքի կաթիլները: Խեղճ Յովնանը խորր անբաշեց ու հետեց իր կնոջը: Իսկ անմեղ մանուկները նայում էին իրենց թշուառ ծնոյններին: Նրանք երբէք տեղեկութիւն չունէին վշտի ու ցաւի մասին: Գեռ նրանք մանուկ էին և ծանօթ չէին կեանքի գժարատար պայմաններին: Նորա միայն հաց էին պահանջում: Գինը մտածում էր դնալ մուրացկանութիւն անել և իւր գաւաղներին կերակրել: Բայց նրան ստիպում էր միայն և միմիայն մի բան—ամօթը: Այն, նա ամաչում էր, որովհետեւ կեանքում մի այդպիսի բայլ առաջին անգամն էր, որ պիտի անէր: Նա չէր կարող լսել այն աղա-պարսնների խօսքերը, որոնք շարտում էին մուրացկանի երեւոյն: Նրանք ճախ սեղանի առաջ նստած, մինչև անգամ ուշադրութիւն էլ չէին դարձնում

մուրացկանի վերայ: Ուրեմն ինչ էր մնում այդ սղորմելուն, ոչ մի տեղից յոյս, ոչ մի տեղից օգնութիւն չկար. կամ պէտք է իր անմեղ մանուկները սովամահ լինէին, կամ մի կողմ թողնելը ամօթխածութիւնը և դիմելը մուրացկանութեան ճանապարհին... Կամայ-ակամայ պէտք է խոնարհւէր բազմին:

Նրա բազմից մութն արգէն կոխել էր, և ստիպւած էր այդ երեկոյ բազցած միջնացնել, մինչև որ վաղ առաւօտը լուսանար: Բայց նըրա երեխաներից ամենափոքրը ազիտորմ լալիս էր ու հաց էր ուզում, իսկ մայրը նորան հանգստացնելով ասում էր, որ վաղը առաւօտեան կը բերեմ:

Հիւանդ Յովնանը տանջանքի ու հոգսի ձեռքից հալել մաշել էր և քնածի նման ընկած էր: Նա ոչ թէ քնել էր, այլ հոգսի ու վշտի ձեռքից թուլացել էր:

Երեխաները ազդագիւում էին քաղցածութիւնից, տրդէն երեք օր էր, որ նրանք ոչինչ չէին կերել: Մայրը, զժբազգ մայրը, ամբողջ դիշերը չընտւ, այլ սպասում էր առաւօտեան

լուսանալուն, որ գոնէ մուրացկանութեամբ թեթեացնէ փոքր ինչ իրենց վիշտը: Ժամերը նըրա համար օրերից երկար էր թւում:

Վերջապէս լուսացաւ. քաղաքը սկսեց շարժւել, ամեն մարդ գնում էր իր գործին, իսկ խեղճ կինը առաւ իր փոքր երեխային և դիմեց մուրացկանութեան: Երեխան մօր գրկում մըսում էր և կուշ էր եկել: Մայրը նեղ ու խուլ փողոցներով անցնելով, հասաւ մի հօյտկապ շինութեան, որը կարծես ուզում էր կուլ տալ ազրատ կնոջն ու երեխային: Վերջապէս նա գուռը բացեց և ներս մտաւ, ուր նստած էր մի հարուստ ազա:

Կինը աչքերից արտասուք թափելով ազալից սղորմութիւն խնդրեց:

— Ողորմութիւն արա, պարոն, ի սէր Աստուծոյ, երեխէքս բազցածութիւնից կոտորւում են:

— Աստուած տայ, աչքերը յառելով դէպի մուրացիկը, ասայ զժնազէմ պարոնը:

Խեղճ կինը նայում էր, թէ ինչպէս բաղում հարուստի մանուկները խաղ էին անում,

ու ինչպէս նրանց մայրը նախաճաշի էր հրա-
 ւիրում: Նրանք գալով մօր գրկում փոքր երե-
 խային խփելով զնում էին սենեակ: Թշուառ կի-
 նը կարծես բախրում էին մոռացաւ թէ ինչու է
 եկել այդտեղ ու կրկին մտաբերելով իր տունը,
 իւր ամուսինն ու քաղցած երեխաներին, նո-
 րից հառաչելով ասաց.

— Ոգորմացէք ապրատես, զթացէք անկա-
 րիս, յիշեցէք ամենապթոտ Աստուծն:

— Քանի մէկ զահլէս տանիս, անամօթ, —
 չես էլ ամաչում, որ երեխայից մինչև անգամ
 մուրացկանութիւն ես սովորեցնում: Հեռացիր,
 կորի գնայ:

Խեղճ կինը յուսահատ այս ծանր խօսքերից
 ձեռնունայն դուրս եկաւ և գիմեց դէպի տուն:
 Մայրը ներս մանելուն պէս, երկու երեխանե-
 րը օտբերովը փաթաթեցան և հարցնում էին
 թէ հաց բերել է:

Մայրը երեխաների հարցին ոչ մի պատաս-
 խան չը տուց, այլ միայն լուռ ու անխօս հ-
 րեխային գրկից վայր գրեց:

Յսմանը տեսնելով որ կինը գատարկ է

տուն եկել, խորը հոգոց քաշեց ու կնոջը հար-
 ցրեց, թէ դատարկ վերադարձար:

Կինը չը յուսահատելով ասաց.

— Ասուած մեծ է, կգնամ եկեղեցի, գու-
 ցէ այնտեղ գտնւի մի բարի մարդ, որ գտնէ
 թեթեացնէ մեր վիշաք... և երեխաների լոկ
 խօսքով հանգստացնելով, թէ եկեղեցի գնամ
 ձեզ համար հաց կը բերեմ:

Այս անգամ նա դարձեալ գիմեց մուրաց-
 կանութեան: Գնաց եկեղեցի, մտաւ ներս ու
 սկսեց ջերմեասնագորէն աղօթել Աստուծն: Նա
 այնտեղ տեսնում էր, թէ ինչպէս հարուստ
 կանայր կանգնել էին ու միմեանց հետ խօ-
 սում, իսկ իները անընդհատ աղօթում էր:

Երբ փոքր ինչ յետոյ ժամերգութիւնը վեր-
 ջացաւ, մուրացիկ կինը դուրս եկաւ և կանգ-
 նեց եկեղեցու դռան մօտ, սրտեղից բարե-
 պաշտ ժողովուրդը պիտի անցնէր... և յուսա-
 լով որ իրան էլ մի կերպ օգնութեան պիտի
 հասնէին: Ժողովուրդը նայում էր խեղճի վրայ
 ու անուշադիր թողնելով անցնում, իսկ իները
 այդ ժամին մտածում էր, թէ ամբողջ եկեղե-

ու և մ չգտնուեց մի մարդ, որ գտնէ հասկանար լիր՞ն ցաւից. . . նա արդէն յուտահաուել էր, իսկ թիչ էր մնում, թողնէր ու գարձեալ գատարկաձեռն դիմեր դէպի տուն: Այս միջոցին յանկարծ մի պառաւ բարեպաշտ կին, եկաւ մօտեցաւ ու խղճալով ասաց.

— Այ սպորմիլի, չես մըտում, որ այդպէս ոտարօքիկ կանգնել ես սառը գետնին. ահա քեզ փող, ինչ որ ունիմ, գնայ ու սրանով բաւականացիր, սրովհետեւ սրանից աւելի չունիմ, ոչ թէ զլացայ օգնել քեզ. ասաց ու գնաց:

Իսկ ազրատ կինը առաւ նրա սպորմուլիւն տւած 10 կոպէկանոցը, և փոքր ինչ ուրախանալով գնաց հաց առաւ ու շտապեց դէպի տուն. Չտապում էր, որովհետեւ երեսօտները բազմաձեռն սպասում էին իրեն վերադարձին: Վերջապէս շտապ գնալուց յետոյ, տուն հասնելով կանգնեց իրենց գուան մէջ ու երեսօտներին ձայնելով ասաց. —

— Եկէք, սիրելի զաւակներս, ահա ձեզ հաց եմ բերել, ամբողջ եկեղեցում հազիւ գտնուեցաւ մի բարեբաշտ կին, որ չզլացաւ տալ

տասը կոպէր ձեզ հաց առնելու համար. ար-

Երեսօտներին հացը բաժանելով մի պէլ իր բերանը դրաւ ու մի քիչ էլ դրեց իր թշտո ամուսնու գլխի վերեւը, որ գարթնի և ուտէ: Երեսօտները ազահուլթեամբ ուտում էին հացը, կարծես թէ տարիներից ի վեր հաց չէին կերել, նրանք մտաւորով էին հացը ներս տանում իրենց բերանը: Այդ ուրախայի ժամին յանկարծ Յովնանը գարթնեց և տեսաւ որ ամեն ինչ հանդարտ էր: Այն խրճիթը, որ կէս ժամ առաջ աղաղակներով էր լցւած ու երեսօտները գուռն գոչւումով հաց էն պահանջում, այժմ տասը կոպէկի հացով՝ ամեն ինչ հանդարտուել էր: Մի քանի վայրկեան մեռելային լուսովին տիրեց: Կինը տեսնելով որ իր ամուսինը գարթեւ է՝ ասաց.

— Այգտեղ փոքր ինչ հաց կայ, առ կեր. իսկ ամուսինը, հացը վերցնելով, կանչեց փոքրը երեսօտյին ու աւեց նրան:

Կինը հարցրեց, թէ ինչն է ուտում: Յովնանը պատասխանեց, որ, նրա բերանը չի բացւում չի կարող ուտել: Իսկ փոքր երեսօտն

ու եմ չգտնեց մի մտրդ, որ գտնէ հասկանար
վիրոյն ցաւից. . . նա արդէն յուսահատուել էր,
իսկ թիչ էր մնում, թողնելը ու գարձեալ գա-
տարկաձեռն գիմեր գէպի տուն: Այս միջոցին
յանկարժ մի պառաւ բարեպաշտ կին, եկաւ
մօտեցաւ ու խզաւում ասաց.

—Այ սղորմելի, չես մրտում, որ այդպէս
օտարօրիկ կանգնել ես սառը գեանին. ահա
քեզ փող, ինչ որ ունիմ, գնայ ու սրանով բա-
ւականացիր, սրովհետեւ սրանից աւելի չունիմ,
ոչ թէ զլացայ օգնել քեզ. ասաց ու գնաց:

Իսկ ազրատ կինը առաւ նրա սղորմութիւն
աւած 10 կոպէկանոցը, և փոքր ինչ ուրախա-
նայով գնաց հաց առաւ ու շտապեց գէպի
տուն. Չտապում էր, որովհետեւ երեստաները
բազմաթիւ սպասում էին իրեն վերագործին:
Վերջապէս շտապ գնալուց յետոյ, տուն հաս-
նելով՝ կանգնեց իրենց գաւան մէջ ու երեստ-
աներին ձայնելով ասաց. —

—Եկէք, սիրելի գաւակներս, ահա ձեզ
հաց եմ բերել, ամբողջ եկեղեցում հազիւ
գտնեցաւ մի բարեբաշտ կին, որ չզլացաւ տալ

տառը կոպէր ձեզ հաց տանելու համար.

Երեստաներին հացը բաժանելով՝ մի փոքր
էլ իր բերանը դրաւ ու մի քիչ էլ գրեց իր
թշտաւ ամուսնու գլխի վերքը, որ զարթնի և
ուտէ: Երեստաները ազահութեամբ ստում էին
հացը, կարծես թէ տարիներից ի վեր հաց
չէին կերել, նրանք մատնելով էին հացը ներս
տանում իրենց բերանը: Այդ ուրախայի ժա-
մին յանկարժ Յովնանը զարթնեց և տեսաւ որ
ամեն ինչ հանդարտ էր: Այն խրճիթը, որ
կէս ժամ առաջ ազազակներով էր լցւած ու
երեստաները դուռն ու գոտնով հաց էն պահան-
ջում, այժմ տառը կոպէկի հացով՝ ամեն ինչ
հանդարտուել էր: Մի բանի վայրկեան մեռելային
լուսթիւն տիրեց: Կինը տեսնելով որ իր ամու-
սինը զարթել է՝ ասաց.

—Այգտեղ փոքր ինչ հաց կայ, առ կեր.
Իսկ ամուսինը, հացը վերցնելով, կանչեց փո-
քրը երեստային ու աւելի նրան:

Կինը հարցրեց, թէ ինչո՞ւ չի ստում:
Յովնանը պատասխանեց, որ, նրա բերանը չի
բացում չի կարող ուտել: Իսկ փոքր երեստան

ու
լայր առնելով, ուրախանում էր և ուտում:
Գինը շատ էր նեղանում, թէ լինէն էր պա-
ճառը, որ իր ամուսինը հացը չկերաւ: Նա
նստած հրկար մտածում էր, մի գուցէ իր
զծրախա ամուսինը ծանր ցաւերի տակ ճըն-
չում էր, ու նրա աչքերից թափոււմ էին ար-
տասուքի կաթիլները:

Եւ ահա այդ իսկ բոլորին, մեզմ գոզանջե-
ցին եկեղեցու երեկոյեան ժամերգութեան
զանգակները: Խեղճ կնոջ սիրտը թնկայ, կար-
ծում էր թէ ուրախութեան զանգակներն են
գոզանջում նրա ականջին, մտածեց զար-
ձեալ գնայ, եկեղեցի ջերմեանդօրէն աղօթել,
որ Աստուած զարձեալ գլխայ իր զաւակներին
և օգնութիւն հասցնէ... Նա պատրաստոււմ
էր գնալ եկեղեցի և աղօթել Աստուան: Նա
այս անգամ մտածեց իր ամուսնուն զարթե-
ցնել, որ երեխաներին պահէ, իսկ ինքը գնայ
եկեղեցի: Երբ մտեցաւ ամուսնու անկողնին
զարթնեցնելու, կարծես նրա սիրտը ճնչում
էր և սփում էր ձեղրել տեղիցը գուրս գալ:
Զսպելով իրան ու աչքերը զարձնելով ամուս-

նուն, մեզմ ձայնով առաց.—

— Սիրելի Յովնան վեր կաց երեսաներին
պահիր, մինչև ես գնամ եկեղեցի ու աղօթեմ
Աստուան որ թէ քեզ աւաղջութիւն տայ և
թէ մենք ազատենք այս գառն վիճակից ու
տանջանքից և մեր նախկին բարեկեցիկ գրու-
թիւնը պահենք:

Քայց ամուսինը բնու ձայն չէր հանում,
կարծես խորը քնել էր: Իսկ կինը սարսափա-
հար յետ քաշեց... Քայց զարձեալ մտեցաւ ու
ձեռքով շարժում էր, որ զարթնեցնէ: Քայց
ուշ, արգէն ուշ էր: Տառապեալ ձերուին մե-
ռած էր... Մեռաւ, այն, որովհետեւ հիւանդու-
թիւնը նորան մաշել էր և բնտանեկան հոգսը
միանգամայն նրա ցամաքած կմախքն էր թնկել:
Նա ծնել էր աղքատութեան մէջ և մեռաւ
գառն հոգսերով լցած, որովհետեւ անբազզ
հայր էր:

Գինը ան քաշեց և ուշաթափած ընկաւ
թշառ ամուսնու կրծքին, քայց ուշ էր ար-
գէն, որովհետեւ մահան հրեշտակը սառը թե-
ւերով գրկել էր նրան և հոգին բարձրացրել

դէպի երկինք: Գառն էր կնոջ վիճակը, տեսնելով իր ամուսնու կանխահաս մահը...

Երկար ուշաթափուելուց յետոյ, վերջապէս սթափուեց— վեր կացաւ տեսաւ իր սիրելի ամուսնու մահը, սղբաց ու հառաչեց, տխրեց ու լացեց: Բայց իր ամուսինը յաւիտենական քրնով անդարձ բնել էր, հանդերձեալ կեանքի մէջ զարթնելու յոյսով:

Այն օրից ընտանեկան ամեն հագս ու ծանրութիւն բարդեցաւ թշուառ կնոջ ուտերին... Ընաանիքի միակ յոյսն ու ապուէնը չա մնաց: Այլես կողմնակի ոչ մի օգնող չունէր, որ պոնէ իր վրայ դրած ծանր բեռը փոքր ինչ թեթեանար ու ինքք կարողանար մի քիչ շունչ քաշել: Կողմնակի ոչ մի եկամուտ չը կար, որ պոնէ նրանով կարողանար սրբերին կերակրել. նրանց ուտելու, հագնելու, կարել-կարկառելու, լւանալ-մաքրելու և միով բանիւ պահել-մեծացնելու հոգսը նրա մայրական կոտրւած շիւրքին մնաց:

Թէպէտե յուսակոտուր էր խեղճ կինը, բայց ինչ կարող էր անել, միանպամայն բազդը նս-

րանից երես էր գործրել, իսկ սե ճակատագիրն էլ մի կողմից էր հարւածում: Մնացել էր երկու կրակի մէջ տեղը չւարած ու մուտրւած, որ կողմը գնալն ու գալն ինքն էլ չը զիտէր, թէ թողնէր հեռանար՝ օրրերն էին մնում անտէր-անտիրական, թէ մնար՝ ապրելու ոչ մի հնարաւորութիւն չկար, մնացել էր տարակուսւած: Վերջապէս երկար խորհրդածելուց յետոյ՝ վճռեց այսպէս անել:

«Երեխանցս կթողնեմ հորեան Զողիկի հակողութեան տակ. որովհետե նա զթոտ և կարեկից կին է, իր օրոց պէս կպահպանէ, իսկ ինքս կգնամ այս ու այն հարուստի դուռը լրւածք կանեմ, խմոր կհունցեմ, կաց կը թխեմ, մի խօսքով ամեն բան կանեմ և սրբերիս օրական պարէնը կհայթայթեմ ու չեմ թողնիլ, որ նրանք քաղցածութիւնից կառուեն, մեռնեն: Ոչ, ոչ իմ մայրական քաջութիւնը իմ օրգիտութիւնը այս նեղ ու թշուառ օրերում պիտի երևան: Այսպէս անելով ես ինձ նման ուրիշ շատ թշուառ այրերին բարի օրինակ կը դառնամ, որոնք իմ ճանապարհով գնալով իր-

անց սրբերին կկերակրենն ու քաղցածութեան
ճիրաններէն կազատեն, մահաւանդ զխոնմ որ
սրբի Տէրը Աստուած է:

Ահա այսպէս խորհրդածելով զինաց իր ու
բոշման հտեից ու մայրական գլխատուլիքեամբ
պահնց մեծացրեց իր մատաղ սրբերին:

Ահա ընթերցող կեանքի մի իրական, բայց
գաւն պատկեր, որ ամեն քայլափոխում
մեր աչքերով կտեսնենք, ազբաթի ու հարստի
մէջ, բայց անուշազիր թույնելով, անտարբեր
կերպով մուսացութեան կը տանք:



| | |
|--|---------|
| | Արմ. |
| | 2-3993a |

Գինն է 5 ԿՈԳ.

Դիմել՝ Александрополь, Тинография «Ширак»

Գումարով գնողներին լինում է զեղջ

2018

14356

